2020

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՖԿՍՊԻ-Ի ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ինստիտուտն իր ներքին և արտաքին շահակիցներին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման միջոցով ձգտում է ամրապնդել բուհի և շահակիցների միջև կապը, բարձրացնել կրթական, գիտական և այլ ծառայությունների որակը, բարելավել բուհի վարկանիշը պոտենցիալ շահակիցների, այդ թվում՝ գործատուների շրջանում:

Օբյեկտիվ տվյալների ամբողջականության ապահովումը հնարավորություն է տալիս իրականացնելու շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատում՝ որակի կառավարման համակարգի վերլուծության և բարելավմանն ուղղված հիմնավորված որոշումների կայացման համար:

ՀՖԿՍՊԻ-ի 2016-2020թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի (ՋՌԾ-ի) 1.4 խնդրի իրագործման համար՝ այն է՝ «Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցի և գործընթացների արդյունավետությունը», Ինստիտուտը անհրաժեշտ է համարել «Իրականացնել գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ»:

Այս նպատակով ՀՖԿՍՊԻ-ում կիրառվել են գործընթացների որակի վերաբերյալ շահակիցների տեղեկացվածության ապահովման մի քանի մեխանիզմներ:

ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Ինստիտուտի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացում Հոգաբարձուների խորհրդին:

Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացում Գիտական խորհրդին:

Կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից հավաքագրված տեղեկատվություն

Ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումների վերլուծությունների ներկայացում Գիտական խորհրդի քննարկմանը

Ուսանողների առաջադիմության, շարժի և ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող գործող «Կրեդիտային համակարգի» էլեկտրոնային ծրագիր:

Ինստիտուտի գործունեության և գործընթացների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում ներքին և արտաքին շահակիցներին

Ամբիոնների գործունեության ուսումնասիրության արդյունքների քննարկում ֆակուլտետի խորհրդում և ԳԽ-ում:

ՀՖԿՍՊԻ-ի գործող պաշտոնական կայք www.sportedu.am

2016-ից գործող ՀՖԿՍՊԻ ֆեյսբուքյան պաշտոնական էջ: Բոլոր ստորաբաժանումների կողմից կազմակերպած միջոցառումների, հարցազրույցների, ուսանողական կյանքին վերաբերող տեղեկատվություն:

info@asipc.am էլեկտրոնային փոստի միջոցով հետադարձ կապի ապահովում, ԿԳՄՍ նախարարության հետ Mulberry ծրագրի միջոցով պաշտոնական գրությունների փոխանակում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

ՀՖԿՍՊԻ-ում առկա են շահակիցների շրջանում տեղեկացվածության ապահովման որոշ մեխանիզմներ, որոնց կիրառման արդյունավետության վերաբերյալ կարող ենք փաստել հետևյալը՝

- Բուհում գործում է հաշվետվողականության մեխանիզմ, որը հիմնականում տեղեկատվություն է կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ձեռքբերումների, հաջողությունների մասին, իսկ հետագա բարելավումների նպատակով խնդիրները, բացթողումները ոչ միշտ են արձանագրվում և ներկայացվում կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններում կամ զեկույցներում: Չնայած ամբիոնները ռազմավարական զարգացման ծրագրի միասնական ձևաչափով բուհի գործող Ռազմավարական զարգացման ծրագրի համաձայն կազմել են իրենց ՌԶԾ-ները, այնուամենայնիվ, ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների փոխկապակցվածությունը բուհի ռազմավարությանը թույլ է, ինչ-որ տեղ՝ խզված:

Հաշվետվությունները պետք է հնարավորություն ընձեռեն վերհանելու ուժեղ և թույլ կողմերը՝ իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման նպատակով:

- ՈԱԲ-ի կողմից ներքին շահակիցների շրջանում անցկացվել են հարցումներ հիմնականում 2019-2020 ուստարում (*ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման, գնահատման* վերաբերյալ հարցումներ, *Ուսանողների ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսների և ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների գնահատման* վերաբերյալ հարցումներ, մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերում ընդգրկված *դասախոսների և դասընթացների գնահատման* հարցումներ, *Մասնագիտության ընտրության դրդապատճառների և կրթական միջավայրի բարելավման վերաբերյալ,* բակալավրի և մագիստրատուրայի ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ առցանց ուսանողական հարցումներ): Անցկացվել են նաև ֆոկուս խմբային քննարկումներ առցանց ուսուցման արդյունավետության վերաբերյալ, որոնց վերլուծությունները ներկայացվել են Գիտական խորհրդի քննարկմանը:

Արտաքին շահակիցների շրջանում ևս անցկացվել են հարցումներ: Դրանք են՝

1. ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներ(2018թ., 2019թ.)
2. Բակալավրի և մագիստրատուրայի շրջանավարտների կարիերայի աջակցմանը նպաստող հարցումներ (2019թ.)
3. Գործատուների շրջանում հարցումներ(Բուհ-գործատու աշխատաժողով, 2018թ.)

Նշենք, որ ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման, գնահատման վերաբերյալ 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում ՈԱԲ-ի կողմից

անցկացված հարցաթերթիկային հարցումներում, որին մասնակցել են բուհի ՊԴ կազմի 62%-ը, ընդգրկվել է Տեղեկացվածության ապահովվածության վերաբերյալ հարցերի խումբ՝ նպատակ ունենալով պարզել հարցված դասախոսների տեղեկացվածության աստիճանը Բոլոնիայի գործընթացների հիմնական դրույթների, ինստիտուտում իրականացվող կրթական բարեփոխումների, ներքին տեղեկատվական համակարգի մասին և այլն:

Հարցման արդյունքներից պարզ էր, որ հարցվածների 75%-ը գիտի Բոլոնիայի գործընթացի հիմնական դրույթների մասին, 25 %-ը մասամբ է տեղեկացված, իսկ ՊԴ կազմում չկան այնպիսիք, ովքեր ընդհանրապես ոչինչ չգիտեն Բոլոնիայի գործընթացների մասին կամ դժվարացել են պատասխանել այս հարցին:

Պրոֆեսորադասախոսական կազմի 88 տոկոսը նշել է, որ տեղեկացված է ինստիտուտում իրականացվող կրթական բարեփոխումների մասին, միայն 12 տոկոսն է մասամբ տեղյակ իրականացվող փոփոխություններին: Հարցվածներից ոչ ոք չի դժվարացել պատասխանել հարցին և չկան այնպիսիք, ովքեր իրազեկ չեն իրականացվող բարեփոխումներին: Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ ՊԴ կազմը խնդիրներ չի տեսնում տեղեկատվության տարածման ու հասանելիության հարցում:

Ըստ հարցման արդյունքների՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները գոհ են ներքին տեղեկատվական համակարգի արդյունավետ աշխատանքից: Հարցվածների միայն 7% տոկոսն է հարցին տվել բացասական պատասխան, իսկ 4%-ը դժվարացել է պատասխանել տվյալ հարցին: Հարցվածների 42%-ի կարծիքով ներքին տեղեկատվական համակարգը մասամբ է արդյունավետ գործում:

Թեև արձանագրվել են Բոլոնիայի գործընթացների իրազեկվածության բարձր ցուցանիշներ, սակայն պրոֆեսորադասախոսական կազմի հետ ՈԱ բաժնի ունեցած հանդիպում-քննարկումներից և խորհրդատվություններից պարզ է դարձել, որ Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակվում է հիմնականում կրեդիտային համակարգի, գիտելիքի ստուգման ընթացակարգերի մասին տեղեկություններով, որն իրականում չի ապահովում Բոլոնիայի գործընթացի առանցքային պահանջները:

Ուսանողների շրջանում ուսանողների ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսների և ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների գնահատման վերաբերյալ ՈԱԲ-ի կողմից իրականացված հարցումների օգնությամբ հնարավոր էր պարզել ուսանողների տեղեկացվածությունն իրենց իրավունքներից ու պարտականություններից, կրթական ծրագրերից, ՀՖԿՍՊԻ-ում կիրառվող գնահատման համակարգից, բողոքարկման, ուսման վարձի զեղչման և այլ կարգերից ու ընթացակարգերից:

Ըստ հարցման արդյունքների՝ ընդհանուր առմամբ ՊԴ կազմը բավարարված է եղել ՀՖԿՍՊԻ-ում գործող ներքին տեղեկատվական համակարգից, կրթական գործընթացից, իսկ ուսանողների մեծամասնության կողմից դրական է գնահատվել ուսանողների պարտականություններին, իրավունքներին, քննությունների ընթացակարգին, դիմումների ու բողոքների ընդունման և արձագանքման կարգերին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը:

Հեռավար ուսուցման պայմաններում էլ ավելի են կարևորվել արտաքին և ներքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, էլեկտրոնային շտեմարանների հասանելիությունը: Առցանց ուսուցման արդյունավետության վերաբերյալ հարցումները, ֆոկուս խմբային քննարկումները, դասախոսների կարծիքների վերլուծությունները բացահայտել են ուսումնական գործընթացի սահուն կազմակերպման և անցկացման, ժամանակին անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման, էլեկտրոնային գրականությունից օգտվելու և նմանատիպ այլ խնդիրներ: Հարցումների վերլուծություններում ՈԱԲ-ը ներկայացրել է նաև բարելավման առաջարկություններ, որոնք քննարկվել են համապատասխան ստորաբաժանումներում: Օրինակ, առաջարկվել է ՀՖԿՍՊԻ-ի թարմացվող պաշտոնական կայքում ստեղծել հեռավար ուսուցմանը վերաբերող կրթական գործընթացի բոլոր շահակիցներին՝ ուսանողներին, դասախոսներին ուղղորդող հաճախակի տրվող հարցերի առանձին բաժին, ներկայացնել խորհուրդներ, ուղեցույցներ առցանց ուսուցման վերաբերյալ, որտեղ նշված կլինեն ուսանողի պարտականությունները, կնկարագրվեն ուսանողի գիտելիքների ստուգման ու գնահատման ձևերն ու չափանիշները, ինչպես նաև հարստացնել և հասանելի դարձնել բուհի էլեկտրոնային գրադարանը:

Դիտարկվող ժամանակահատվածում /2016-2020թթ./ գործատուների շրջանում հարցումներ անցկացվել են միայն 2018-ին կազմակերպված «Բուհ-գործատու աշխատաժողովի» ժամանակ, որին մասնակցել են հանդիպմանը ներկա 11 գործատու: Հարցումների նպատակն էր բարելավել ուսումնական գործընթացների կազմակերպումն ու շրջանավարտների մասնագիտական կարողությունները: Մասնակիցների առաջարկությունների հիման վրա վերանայվել են 2018-2019 ուստարվա բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանները: Ավելացել են օտար լեզվին և պրակտիկային հատկացված ժամաքանակները: Ցավոք, գործատուների հետ ֆորմալ հանդիպումները շարունակական բնույթ չեն կրել: Պետք է փաստենք նաև այն, որ նշված հանդիպմանը մասնակցել են յուրաքանչյուր ոլորտից 1-2 մասնագետ: Սա ևս պետք է հաշվի առնել հաջորդող հանդիպումների, աշխատաժողովների, հարցումների ժամանակ:

Խոսելով ՈԱԲ-ի կողմից անցկացված կրթության որակի շարունակական բարելավման նպատակով անցկացրած հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների մասին, նշենք, որ արդյունքները հասանելի են դարձել ներքին շահակիցներին միասնական էլեկտրոնային փոստի միջոցով /@sportedu.am/: Հարցման արդյունքները, ինչպես նաև վերհանված խնդիրները քննարկվել են ԳԽ-ում, ինչպես նաև ռեկտորատում և հանձնարարվել է համապատասխան ստորաբաժանումներին մշակել բարելավումների քայլեր, միջոցառումներ:

Պրակտիկայի և կարիերայի բաժնի կողմից շրջանավարտների շրջանում 2017-2019 թթ. անցկացրած հարցումների նպատակն էր պարզել ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից, կրթական միջավայրից, ուսումնասիրել շրջանավարտների հետագա կրթությունը շարունակելու, համապատասխան աշխատանք

գտնելու մտադրությունները, նրանց կարծիքը աշխատաշուկայի պահանջներին ստացած կրթության համապատասխանության վերաբերյալ, ինստիտուտի հետ կապի պահպանման և այլ հարցեր, որոնք շատ արժեքավոր տեղեկատվություն են բուհի և կրթական ծրագրերի բովանդակային վերանայման համար:

2018-2020թթ. Պրակտիկայի և կարիերայի բաժնի կողմից յուրաքանչյուր պրակտիկայի ավարտին անցկացվել են պրակտիկաներից (մասնագիտական, մանկավարժական, կլինիկական) բավարարվածության հարցումներ, սակայն ներկայացվել են միայն քանակական տվյալներ: Պրակտիկայի վերաբերյալ հարցումների արդյունքների մասին զեկուցվել է Գիտխորհրդի հերթական նիստին և պրակտիկաների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գիտխորհուրդը կայացրել է որոշումներ:
Անհրաժեշտ է նաև շրջանավարտների և պրակտիկանտների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում պարբերաբար անցկացնել հարցումներ, որոնց միջոցով կպարզաբանվեն արտաքին շահակիցների կարծիքը շրջանավարտների և պրակտիկանտուսանողների մասնագիտական կոմպետենցիաների, ընդհանրական կարողությունների, թողարկող մասնագիտությունների պահանջվածության, նոր մասնագիտությունների առաջարկությունների, աշխատաշուկայում Ինստիտուտի շրջանավարտների վերաբերյալ: Նախատեսվում է շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումների քանակական հետազոտությունից անցնել նաև որակական հետազոտությունների: Ընթացքի մեջ է 2019-2020 թթ. շրջանավարտների առցանց հարցումը՝ վերանայվել է հարցման կանոնակարգը և հարցաշարը:
Ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին հանձնաժողովի հաշվետվություններն՝ իրենց առաջարկություններով, ինչպես նաև Պրակտիկայի և կարիերայի բաժնի կողմից կազմակերպվող պրակտիկաների կազմակերպման արդյունավետության վերաբերյալ հարցումներն օգտագործվում են կրթական ծրագրերի մշտադիտարկման, վերանայման ժամանակ:

- Ֆակուլտետների ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով ձևավորված Մեթոդական հանձնաժողովի կողմից ամբիոններում պարբերաբար իրականացվող ներքին ստուգումները ևս գործընթացների որակի մասին շահակիցներին տեղեկատվության ապահովման մեխանիզմներից են, որոնց արդյունքները քննարկվում են ֆակուլտետի խորհրդում, այնուհետև ԳԽ-ում և տրվում են համապատասխան հանձնարարականներ՝ բարելավող գործողությունների իրականացման համար: Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում անցկացվել են առնվազն երկու ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական, ինչպես նաև մարզչական աշխատանքների ստուգումներ (ամբիոնի 3 տարվա գործունեությունը): Հանձնաժողովի ուսումնասիրությունների հիման վրա Գիտխորհրդի որոշման կատարումը գնահատվել է հաջորդ տարի և կրկին ներկայացվել է Գիտխորհրդի քննարկմանը:

Որակի ապահովման բաժինն, ուսումնասիրելով «Ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտամեթոդական գործունեությունն ուսումնասիրող հանձնաժողովի հարցաթերթիկը», ըստ որի ստուգվում են ամբիոնների փաստաթղթերը, որակի ներքին և

արտաքին գնահատման համար հիմքեր ստեղծելու նպատակով մշակել է «Ամբիոնի գործունեության ներքին աուդիտի իրականացման ընթացակարգ», որը հնարավորություն է ընձեռում ամբիոնների գործունեության գնահատումն իրականացնել ըստ ընթացակարգում ամրագրված չափանիշների՝ հիմք ընդունելով ամբիոնների դասալսումների, հարցումների արդյունքները, արձանագրությունները, զեկույցները, վերլուծությունները, տարեկան հաշվետվությունները և այլն: Աուդիտի եզրակացության հիման վրա հանձնաժողովի կողմից արված բարելավման առաջարկությունների հետևողական կատարումը վերահսկելու, գնահատելու քայլերը պլանավորման փուլում են:

- Ինստիտուտի պաշտոնական կայքը, չունենալով հետադարձ կապի (հարց ու պատասխանի) հնարավորություն, ներքին և արտաքին շահակիցների հետ ակտիվ հետադարձ կապ ապահովել է info@asipc.am էլեկտրոնային փոստի, ֆեյսբուք սոցիալական ցանցի պաշտոնական էջի միջոցով:

Այսպես, 2016-2017 ուստարվա ընթացքում արձանագրվել է ֆեյսբուք սոցիալական ցանցի պաշտոնական էջի միջոցով 420 հարցուպատասխան, 2018-2019 ուստարվա ընթացքում՝ 586, 2019-2020 ուստարում՝ 787: Հարցերը հիմնականում վերաբերել են ընդունելության գործընթացին, ինչպես նաև ուսումնական, իսկ առավելապես ուսանողներին հետաքրքրել են զեղչման ընթացակարգից օգտվելու հետ կապված հարցերը:

Բուհը նախաձեռնել է ծավալուն աշխատանքներ համացանցում ներկայանալի լինելու համար, բացի այդ բուհը մեծ աշխատանքներ ունի կատարելու իր գործընթացների որակի մասին տեղեկատվության տարածման և արդյունավետության գնահատման ուղղությամբ: 2020 թվականին Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ՀՖԿՍՊԻ-ի նոր կառուցվածքի շնորհիվ Հասարակայնության հետ կապերի պատասխանատուի (նոր հաստիք) գործառույթներով և մշակված հայեցակարգով հնարավոր կլինի շահակիցներին լիարժեք իրազեկել կրթական գործընթացների մասին, տրամադրել տեղեկատվություն մասնագիտությունների, ուսման վարձերի և տրամադրվող զեղչերի, ուսանողներին աջակցող հիմնադրամների, բուհի միջազգային համագործակցության վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրել բոլոր հնարավոր աղբյուրներից: Ստորաբաժանումների ակտիվ աշխատանքների և համագործակցության շնորհիվ հնարավոր է ուժեղացնել շահակիցների տեղեկացվածությունը գործընթացների որակի ապահովման վերաբերյալ:

Ինստիտուտի պաշտոնական կայքում Որակի ապահովման բաժինը դեռևս չունի առանձին էջ, որտեղ զետեղված լինեն որակի ապահովման գործընթացների մասին տեղեկատվություն, ինչպես օրինակ ՄԿԾ-ի իրականացման որակի վերաբերյալ տեղեկատվություն, իրականացված վերլուծությունների մասին հաշվետվություններ, զեկույցներ և այլն: Սակայն իրականացվում են քայլեր որակի գործընթացների վերաբերյալ շահակիցների իրազեկվածության բարձրացման նպատակով:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների, ընդունելության մասին դիմորդները տեղեկանում են բուհի պաշտոնական կայքին հետևելով, ֆեյսբուք սոցիալական ցանցի, Dimord.am կայքի, ռադիոգովազդի տեսահոլովակների միջոցով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինստիտուտն առաջնորդվում է իր գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցներին մշտապես իրազեկ և տեղեկացված պահելու քաղաքականությամբ. ՀՖԿՍՊԻ-ն այսօր բավականին լավ է ներկայացված ամենատարածված սոցիալական ցանցերից Facebook-ում. ուսանողները, դիմորդները, շրջանավարտները և այլոք տարբեր հարցեր են տալիս, պատասխաններ ստանում, ինստիտուտի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ կարծիք արտահայտում, որը վերլուծվում է հասարակայնության հետ կապերի պատասխանատուի կողմից:

Ինչպիսի՞ ազդեցություն ունի շահակիցներից ստացված տեղեկատվությունը:

ՀՖԿՍՊԻ-ն՝ լինելով գիտակրթական լուրջ դերակատարություն ունեցող հաստատություն, մշտապես պետք է իրականացնի տեղեկատվության տարածման մշտադիտարկում, որն, ինչպես նկատեցինք, չի իրականացվել պատշաճ մակարդակով՝ պայմանավորված տեղեկատվության տարածման մեխանիզմների, խողովակների և դրանց արդյունավետության գնահատման (պլանավորում, պատասխանատուների գործառույթների հստակեցում, գործընթացների վերլուծություն/գնահատում, հետադարձ կապ) համար անհրաժեշտ գործիքների անկատարությամբ: Մինչդեռ Ինստիտուտի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ապահովող մեխանիզմների կիրառման արդյունավետությունը գնահատող շարունակական մշտադիտարկումները թույլ կտան տեսանելի դարձնել ակնկալվող և ձեռքբերված արդյունքների դինամիկան:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ